128

1. Սիրտս կտապկի ծարավով մ’անհուն,
Մինչ տենչանքներուս կրակը ներքին
Կտոչորե զիս կրկին ու կրկին,
Ծարավս մարող կա սոսկ մեկ անուն:

Դուն միայն, ո՛վ Տեր: (2)

2. Հարստություններ աշխարհի գիտեմ՝
Ծովի ջուրերեն լեղի ու աղի,
Խմողին կուտան ծարավ կատաղի:
Անսպառ գանձ ես աղքատության դեմ:

3. Իսկ փառքի սերը, պատիվ ու համբավ,
Միայն կարճ կյանքիս օրերու համար,
Չէ՛, չեն դյութեր զիս, չեմ այդչափ հիմար,
Պիտի տաս ինձի փառք, պատիվ, համբավ:

4. Հարստություն, փառք, գիտություն, հանճար,
Ամենն ալ կանցնին, զի անցավոր են,
Մարդկային հոգին հագեցնող վերեն՝
Մշտական ես, կաս՝ արդար, անաչառ:

5. Խաղաղության մեծ ու հզոր Իշխան,
Տե՛ր Հիսուս Քրիստոս, Հայր Աստված ու Բան,
Խաղաղությո՛ւն տուր անձիս անսպառ,
Որ Քու սիրույդ մեջ մնամ հավիտյան:

6. Հեռու երկիրներ ես պտտեցա,
Ցամաք, ծով, երկիր չվեցի, անցա,
Խնդրեցի, թե ով ինձ հանգիստ կտա,
Հոգուս մխիթար մեկ անուն գտա: